



ԱՔՐԱՀԱՄ ՍՐԵՂԱ ՄԿՐՏՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ
ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻԾԵԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ*

ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՄԻՆՎՈՐՈՒՄԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՕՐՈՔ

Ինչպես արդեն ասացինք, Սյունյաց Աթոռի երկփեղկումը տեղի ունեցավ 1216 թվականին՝ Նորավանք և Տաթև կենտրոններով: Այս բաժանումը տեղիք տվեց տարբեր գծադրությունների ու ընդհարումների, որը եկավ նսեմացնելու այս պատմական Աթոռի նախկին դերն ու նշանակությունը: Այս վիճակը տևեց շուրջ 70 տարի, մինչև որ Ստեփանոս Օրբելյանը եկավ միավորելու այն և բարձրացնելու իր նախքին դիրքին ու նշանակությանը: Ստեփանոս Օրբելյանով Սյունյաց Աթոռն սկսում է ծաղկման մի ճյուղը, որն իր խոր կնիքն է թողնում հատկապես հայ միջնադարյան մշակույթի ու ճարտարապետության վրա:

Ինչպես նախօրոք ասացինք, Օրբելյան Եփևումի որդի Լիպարիտը Ստեփանոս Գ-ի անմիջական օգնությամբ ազատվում է սելջուկների իշխանությունից և հաստատվում Սյունիքում: Այնուհետև Լիպարիտին փոխարինել է նրա որդին՝ Սմբատը, որը անգավակ լինելով, որդեգրում է Ստեփանոս Օրբելյանին՝ իր եղբոր՝ Տաթևայիճի որդուն, մանուկ հասակից: Սմբատին փոխարինում է Տաթևայիճը 1273 թվականին, որի քրիստոնեությունն ընդունած ալյազգի առաջին կնոջից և ծնվել էր Ստեփանոսը:

Օրբելյանի ծննդյան թվականը հայտնի չէ:

* Ծարուսկված «Էջմիածին» ամսագրի 1988 թվականի № 5-Ձ-ից և Է-ից:

Ուսումնասիրողների կողմից առաջ են քաշվել մի քանի հավանական կարծիքներ, հիմնված հիմնականում ենթադրությունների վրա: Մեզ հավանական է թվում Գ. Մ. Գրիգորյանի տեսակետը, որի համաձայն՝ Ստեփանոս Օրբելյանը ծնվել է 1240-ական թվականներին:

Ստեփանոսը նախ սովորում է Տաթևում Հայրապետ եպիսկոպոսի մոտ, ուր, «անեալ և ունեալ առ ոտս աստուածարեալ արանց, կրթեալ ի հրահանգս ընթերցման և երաժշտութեան՝ եղէ փառղտ և անագանոս ի գաւիթս Տեառն. կոչեցայ ի դպրութիւն և ի սարկաւագութիւն Աստուծոյ»¹²⁰: Այնուհետև Ամաղու Նորավանքում ձեռնադրվում է կուսակրոն քահանայ, որի առթիվ նրա հայրը՝ Տաթևայիճը, «արար ժողով բազում եպիսկոպոսաց և վարդապետաց և վանականաց աշխարհախումբ հանդիսի ի գերափառ ուխտին Նորավանից և ետ ձեռնադրել զորդի իւր՝ Ստեփանոս, ի քահանայութիւն յ729(=1280) թուականին»¹²¹: Այդ ժամանակ (1280—1284 թթ.)¹²² Գլաձորում էր հաստատվել Ներսես Մշեցին՝ միջնադարի մեր խոշորագույն ընդհանուր, ուր և դիմում է Ստեփանոսը՝ կատարելագործվել:

¹²⁰ Նույն տեղը, էջ 349:

¹²¹ Նույն տեղը, էջ 313:

¹²² Լ. Խաչիկյան, «Գլաձորի համալս.», Երևան, 1978 թ., էջ 24:

լու «ի կրթարանի աստուածեղէն տառից»¹²³։ Գլածորում նա սովորում է 4—5 տարի և Ներսէս Մշեցոյ վարդապետական գաւազան աստուածոց հետո 1285 թվականին ուղարկվում է Կիլիկիա՝ Հակոբ կաթողիկոսի մոտ, եպիսկոպոս ձեռնադրվելու և նշանակվելու որպէս Սյունյաց երկու Աթոռների՝ Տաթևի ու Ամաղու Նորավանքի ընդհանուր մետրոպոլիտ¹²⁴, և ոչ թէ Տաթևի մահաջան առաջնորդի փոխարեն, ինչպէս գրում է Չամչյանը¹²⁵, քանի որ իր վերադարձից հետո դեռևս կենդանի էր Տէր Հայրապետը։ «...մինչ ի վախճան ինքեանց երկոցունցն՝ տէր Հայրապետին և տէր Յովհաննիսին, ոչ դադարեաց խազմն և խորվորթիւնն»¹²⁶։

Սակայն մինչ Ստեփանոսը Կիլիկիա կրհասներ, 1286 թվականին վախճանվում է Հակոբ Ա Կալեցին։ Այստեղ Օրբելյանը հանդիպում է Լևոն Գ (1270—1289)¹²⁷ թագավորին, և «գտաք պատիւ ի նմանէ ի վեր քան զարժանն մեր»¹²⁸։ Լևոն Գ-ը առաջարկում է Ստեփանոս Օրբելյանին զբաղեցնել կաթողիկոսական թափուր գահը, այս ձևով նպատակ ունենալով թէ՛ սիրաշահել արևելյան վարդապետներին, թէ՛ սերտ կապեր ունենալ մոնղոլների մոտ մեծ դիրքի հասած և օրավոր հզորացող Սյունյաց Օրբելյանների հետ։ Լևոն Գ-ի այս առաջարկի մյուս, կարևոր պատճառը, սակայն, Հակոբ կաթողիկոսի մահից հետո նոր կաթողիկոս ընտրելու համար ծայր առած վեճերն ու բախումները վերացնելն էր, որն ուներ նաև իր քաղաքական պատճառներն ու հետեւականները։ Հակոբ Ա Կալեցոյ մահից հետո կային երկու ընտրելիներ՝ Գրիգոր Անավարզեցին՝ լատինամոլների կողմից, և Կոնստանդին Կատուկեցին՝ Հայ Եկեղեցու ավանդապահության ջատագույների կողմից։ «Լեւոն թագաւոր հաշտարար ընթացք մը կը բռնէր միշտ»¹²⁹,—գրում է Օրմանյան արքայանք։ Օրբելյանը, սակայն, հրաժարվում է այդ առաջարկն ընդունելուց, նկատի ունենալով իր առաքելության նպատակը։ Տաթևյան և Գլածորյան շնչով կրթված ու

դաստիարակված հայրենասեր իշխանագուհի, որ տարիներ հետո պիտի գրէր. «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իշանել և ոչ ընդ Հոռոմոց յերկինս ելանել»¹³⁰, դժվար թէ կարողանար իր համար օտար մի շրջապատում հաշտել լատինամոլությանը տարված արքունիքի, հոգևորականության ու իշխանավորների մեծ մասի հետ։ Երկար վեճերից հետո ընտրվում է Կոնստանդին Բ Կատուկեցին (1286—1289), որի առաջին նշանակվոր գործը լինում է նույն թվականի Զատուկին Ստեփանոս Օրբելյանին ձեռնադրել «...մետրապոլիտ մեծ աթոռոյն Սինեաց ի վերայ այլոց եպիսկոպոսացն, որք կային աստ և անդ՝ ոմանք ի Վայոց ձոր և ոմանք ի Տաթև»¹³¹։

Հատկանշական է այն փաստը, որ Օրբելյանը համարվում է Տաթևի Աթոռի մետրոպոլիտ, քանի որ նախկինում մետրոպոլիտական Աթոռը Տաթևն էր, և ոչ թէ Ամաղու Նորավանքը։ «Եւ այսպէս պսակեալ զՍտեփաննոս ընդ սուրբ և առաքելական եկեղեցոյն Տաթևոյ՝ փեսայացուցանեն այսմ աթոռոյ»¹³²։ Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ Ստեփանոս Օրբելյանը նշանակվում է ոչ միայն որպէս մետրոպոլիտ Սյունյաց, այլև «...պոստաֆրանդէս պատրիարքին Հայոց, այսինքն՝ նախաթոռ լինել և գոյնս ամենայն եպիսկոպոսաց Հայոց»¹³³, կամ «...պոստոֆրոնտէս Հայոց Մեծաց»¹³⁴։ Ըստ Հր. Աճառյանի, հունարենից փոխառված պոստոֆրոնտէս բառը նշանակում է «առաջին խորհող կամ խնամակալ»¹³⁵, իսկ ըստ «Հայկազեանի»՝ «որպէս թէ Առաջին խոհական խնամակալ, և վարժապետ, վարդապետ, ուսումնասէր, իմաստասէր և ճգնատր»¹³⁶։ Անդրադառնալով այս հարցին, Օրմանյան արքայանք գրում է, որ մինչ այդ Անիի եպիսկոպոսներին էր վերապահված նախաթոռությունը Հայոց կաթողիկոսության Կիլիկիայում գտնված ժամանակ, «Բայց Անին հետզհետէ կորուսած էր իր կարեւորութիւնը, եւ Սինիքի դիրքը նորէն բարձրացած էր Օրբելեաններուն՝ Սմբատի և Տառապիճի շնորհիւ»¹³⁷։ Այնուհետև, շարունակելով քննել Օրբելյանի «պոստաֆրանտէս պատրիարքին Հայոց»

¹²³ Ստ. Օրբելյան, էջ 350։

¹²⁴ Լ. Բաբայան, «Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության (9—13-րդ դդ.)», Երևան, 1981 թ., էջ 294։

¹²⁵ Մ. Չամչյան, «Հայոց պատմություն», հտ. — Գ, Երևան, 1984 թ., էջ 283։

¹²⁶ Ստ. Օրբելյան, էջ 314։

¹²⁷ «Հայ ժող. պատմություն», հտ. — Գ, Երևան, 1976 թ., էջ 734։

¹²⁸ Ստ. Օրբելյան, էջ 350։

¹²⁹ Մ. Օրմանյան, «Ազգապատում», հտ. — Բ, էջ 1697։

¹³⁰ Ստ. Օրբելյան, էջ 336։

¹³¹ Նույն տեղը, էջ 313։

¹³² Նույն տեղը։

¹³³ Նույն տեղը, էջ 351։

¹³⁴ Նույն տեղը, էջ 17։

¹³⁵ Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բանարան», պոստոֆրոնտէս բառի տակ։

¹³⁶ «Բազմիք Հայկազեան լեզուի», հտ. — Բ, պոստոֆրոնտէս բառի տակ։

¹³⁷ Մ. Օրմանյան, Ազգ. աշխատ., էջ 1701։

տողը, ավելացնում է. «Անելի բացառապես խօսքով, Հայաստանի վրայ կաթողիկոսական ներկայացուցիչ մը կը հաստատուէր, քանի որ Կիլիկիոյ աթոռին դժուար էր հեռաւոր վիճակներու վրայ անմիջական հըսկողութիւն ընել»¹³⁸:

Ինչպէս վերտւում ասացինք, Օրբելյանը Կատուկեցոց ձեռնադրւում է 1286 թվականի գարնանը: Սակայն նա անմիջապէս չի մեկնում Կիլիկիայից, այլ գրեթէ մեկ տարի ուշացումով՝ 1287 թվականին¹³⁹: Այդ մեկ տարվա ընթացքում նա ատիժ է ունենում մոտիկից ծանոթանալու Հայոց Կաթողիկոսության ներքին խնդիրներին, ընդհանուր քաղաքական, կրօնական ու մշակութային անցուղաքներին:

1287 թվականին Ստեփանոս Օրբելյանը վերադառնում է Այունիք:

Թեև Օրբելյանն իր հայրենիքում ընդհանրապէս ուրախությամբ է ընդունւում, բայց միաժամանակ հանդիպում է Տաթևի Աթոռի եպիսկոպոսներ Հայրապետի ու նրա փոխանորդ Հովհաննէսի ընդդիմութեանը: Տաթևի հոգևոր իշխանության ներքո, ինչպէս արդեն ասել ենք, բաժանումից հետո գտնվում էր Այունիքի թեմերի մեծ մասը, և տեղի եպիսկոպոսները չէին ցանկանում եկեղարկել Ստեփանոսի գերագահ իշխանությանը: Նրանք դիմում են նույնիսկ պալագիներին և «... բազում ոճիրս սերմանեցին և յոյլ վիշտս հաւուցին եկեղեցւոյ»¹⁴⁰: «Այլագիներ» ասելով պատմիչն այստեղ նկատի ունի մոնղոլ-թաթարներին, որոնց իշխանապետն այդ ժամանակ Արդուն խանն էր (1284—1291)¹⁴¹:

Սակայն Օրբելյանն իր առջև նպատակ էր դրել միակորել Սյունյաց երկփեղկված Աթոռը, որին մեծապէս օգնում էր և իր հալոր՝ Տաթևի մեծ իշխանը: Եվ Օրբելյանը այն անձնավորությունը չէր, որ տեղի տար: Նա անմիջապէս ուղևորվում է Արդունի մոտ և «... ցուցեալ նմա զնամակ կաթողիկոսին՝ ծանոց զամենայն որպիսութիւն»¹⁴²: Օրբելյանը Արդունին ցույց է տալիս նաև Տաթևի գրությունը (սիգել), որով «... հանեալ էր բաժին ժառանգութեան մեզ զվանորայն իւրոյ իշխանութեանն՝ զՏաթև, զՆորավանս, զՃաղաքքար, զԱրատիս և զայլն ամենայն»¹⁴³:

Պետք է ասել, որ Օրբելյանի ժամանա-

կաշրջանով հետաքրքրվողները ըստ էության չեն ըմբռնել այս տողը, հատկապէս երբ անդրադարձել են «Ժառանգություն» բառին: Նախ, Ստեփանոսին «Ժառանգություն» տրված Տաթևն ու Նորավանքը իրար նկատմամբ խոր հակասությունների մեջ էին գտնվում և ինքնորոշւմ Աթոռներ էին: Երկրորդ, վանքը չէր կարող որևէ մեկին «Ժառանգություն» տրվել: Ուստի այստեղ որոշակիորեն երևում է և Տաթևի միտումը. իր որդին այս երկու Աթոռների ոչ միայն հոգևոր ստաջնորդն է՝ նշանակված Հայոց կաթողիկոսի կողմից, այլև մարմնավոր տերն ու վերակացուն՝ նշանակված Հայաստանի սգաբեկ¹⁴⁴ ճանաչված մեծ իշխան Տաթևի կողմից: Ուստի Արդունին ոչինչ չէր մնում անելու, եթե ոչ վախճանելու Ստեփանոսին իր նոր դերի մեջ: Արդունը երբեք չէր պաշտպանելու Տաթևի եպիսկոպոսի շահերը՝ ի վնաս իր գորագլուխների ու մեծատոհմիկ իշխաններից մեկի՝ Տաթևի Օրբելյանի:

Արդունը սիրով է ընդունում Տաթևի որդուն¹⁴⁵, արքայական հրամանագրով հաստատում է նրա իրավունքները և մի պալատական պաշտոնյայի հետ ուղարկում Այունիք:

Վերադառնալով Այունիք, Օրբելյանը թեև կարողանում է իր գերագահությունը պարտադրել Տաթևի ապստամբ Աթոռին, սակայն «մինչ ի վախճան ինքեանց երկոցունցն» տեղ Հայրապետին և տեղ Յովհաննէսին, ոչ դադարեաց խազմն և խոտվութիւն»¹⁴⁶: Ինչպէս նախօրոք ասացինք, տեղ Հովհաննէսը հանդես էր գալիս որպէս տեղ Հայրապետի փոխանորդ, որի մահից հետո, սակայն, 1297 թվականին, Օրբելյանը Տաթևի Աթոռին նշանակում է Գրիգոր անունով մի եպիսկոպոսի, որին, ինչպէս և գրել է Օրմանյանը, «... պետք է Տաթևի մեջ նոյն ինքն Ստեփանոսի մեկ փոխանորդը սեպել»¹⁴⁷: Ինչպէս Սյունյաց երկու Աթոռների պատմությունից որոշակիորեն երևում է, աթոռակալի նշանակվելու հետ միաժամանակ, կամ որոշ տարիներ հետո, նշանակվում էր և երկրորդ, այսպէս կոչված՝ փոխանորդ եպիսկոպոսը, ինչպէս տ. Հովհաննէս և տ. Հայրապետ, տ. Հայրապետ և տ. Սողոմոն, տ. Հայրապետ և տ. Հովհաննէս: Այն փաստը, որ այս Գրիգորի անունը Օրբելյանը չի նշել Տաթևի եպիսկոպոսների

¹³⁸ Նույն տեղը, էջ 1703:

¹³⁹ Ստ. Օրբելյան, էջ 314:

¹⁴⁰ Նույն տեղը:

¹⁴¹ Հ. Մանանդյան, Աշխատ., հտ.—Բ, էջ 473:

¹⁴² Ստ. Օրբելյան, նույն տեղը:

¹⁴³ Նույն տեղը, էջ 352:

¹⁴⁴ Նույն տեղը, էջ 312:

¹⁴⁵ Սարգս Արծրունու մահից հետո Հայոց Մեծ աթաբեկ էր նշանակվել Տաթևի: (Տե՛ս «Հայ ժող. պատմ.» Երևան, 1976 թ., էջ 635):

¹⁴⁶ Ստ. Օրբելյան, էջ 314:

¹⁴⁷ Մ. Օրմանյան, Աշխատ., էջ 1705:

գաղազանագրքում¹⁴⁸, գալիս է հաստատելու Օրմանյանի այն կարծիքը, որ նա նշանակված էր Սո. Օրբելյանի կողմից որպես փոխանորդ:

Կարևոր է հատկապես այն փաստը, որ ինչպես արդեն նշեցինք, Օրբելյանը մետրոպոլիտ է նշանակվում Տաթևի հնագույն Աթոռի վրա, միանշեղու ևստում է Ամաղու Նորավանքում: Պատճառը, հավանաբար, այդ ժամանակ Սյունյաց իշխանության կենտրոնին՝ Արիս գյուղին մոտ լինելն էր, ինչպես և այն, որ Ստեփանոսը նախօրոք վարդապետ էր ձեռնադրվել Նորավանքի եկեղեցու համար: Սակայն պատմականորեն ճանաչված Սյունյաց մետրոպոլիտական Աթոռը Տաթևն էր, քանի որ, խոսելով երկու Աթոռների կալվածքների մասին, Օրբելյանն իսկ Տաթևը կոչում է «քուն աթոռ»¹⁴⁹:

Վերադառնալով Արդունի մոտից և խուսափելով նոր ընդհարումներից, Օրբելյանը չի վերացնում Աթոռներից որևէ մեկը, այլ «... եթե փոփոխումն լիցի ժամանակաց և աներ հասցե Տաթևոյ՝ զժառանգություն այնր եկեղեցույ Նորավանքի եկեղեցին ժառանգեցեց և բնակիչքն անդ բնակեցեցն: Եւ թէ Նորավանքից հասցե աներ՝ զժառանգություն և զստացուածս նորա Տաթևոյ եկեղեցին վայելեցեց և բնակիչք նոցա անդ բնակեցեցն»¹⁵⁰:

Դեռ նոր էր Օրբելյանն այսպես կարգավորել իր թեմի ներքին գործերը, երբ 1289 թվականին Կիլիկիայում լատինամոլների անհիմն մեղադրանքների պատճառով բանտարկվում է Կոնստանդին Բ Կատուկեցին, և Ստեփանոս վարդապետ Սկևռացին Հեթում Բ-ի (1285—1305) կողմից Կոնստանդին Բ Կատուկեցու հասցեին գրված մեղադրականով որպես պատգամավոր է ուղարկվում Հայաստան: Սկևռացին ներկայանում է Օրբելյանին, հանձնում մեղադրականը և թագավորի անունից հրավիրում նոր կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու: Օրբելյանը ներկա էր եղել Կատուկեցու ընտրությանը և ինքն էլ ձեռնադրվել նրա կողմից: Ուստի ծանոթանալով այդ անհիմն մեղադրանքներին, կտրականապես մերժում է թագավորի հրավերն ու զայրացած պատասխանում. «Մեք ոչ ենք հասու կամ խորհրդակից եղծման, զի և նորոգմանն հաղորդեցուք. որ ոք ինքնահան կամօք եղծումն արար՝ նոյն և զնորոգ

ընտրությունն հոգացե և կամք Արարչին յայց լիցի իւրում եկեղեցույ»¹⁵¹:

1290 թվականին մահանում է Տաթևային Օրբելյանը, որի մահարձանի վրա գրված է. «Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին, հզոր եւ մեծ գործակալին եւ քաջապահ մեհմարտին»¹⁵²: Հաջորդ տարին Օրբելյանն ուղեվորվում է Արդունին փոխարինած Քեյդաթու խանի (1281—1295) մոտ: Սա Արդունի փոքր որդին էր: Արդունին այցելելու ժամանակ Օրբելյանը ներկա էր եղել սրա քրիստոնյա մկրտվելուն Հռոմի Պապի կողմից ուղարկված մի եպիսկոպոսի կողմից: Այս է պատճառը, որ Օրբելյանը նրա կողմից իրեն ցույց տրված պատիվը «եղբայրական» պատիվ է անվանում: Քեյդաթուն հրովարտակով վերստին հաստատում է Օրբելյանին իր իրավունքների մեջ և մեծ պատիվով ետ ուղարկում¹⁵³:

Այլևս կատարելապես ամրապնդած իր դիրքերը, Օրբելյանը ձեռնարկում է Սյունյաց Աթոռի տնտեսական փնակի բարելավմանը: Նա կարողանում է գնումների ու նվիրատվությունների միջոցով զգալիորեն ընդարձակել Տաթևի ու Ամաղու Նորավանքի հողային տիրույթները: Այսպես, օրինակ, այդ ժամանակ նորավանքին են նվիրվում Զիվա, Քարկոփ, Արատես գյուղերը, բազմաթիվ մանր ու մեծ այգիներ, կանխիկ դրամ և այլն: Իսկ Տաթևին նվիրվում են Արիտ, Ցուր և այլ գյուղեր, բազմաթիվ հողատարածություններ: Այնուհետև Օրբելյանը ձեռնարկում է շինարարական աշխատանքների: Նա հիմնովին վերանորոգում է Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցին, որի շինարարությունն ավարտվում է 1295 թվականին: Նույն թվականին է ավարտվում նաև Պողոս-Պետրոս եկեղեցու զանգակատունը¹⁵⁴, 1286 թվականին կառուցվում են Ս. Աստվածածին¹⁵⁵, Ս. Գրիգոր Լուսավորիչ¹⁵⁶, Մարտիրոս գյուղի փմավոր եկեղեցիների խումբը¹⁵⁷, ապա Ս. Գևորգ (Զիքի վանք)¹⁵⁸, իսկ Ամաղու Նորավանքում, 1290 թվականի շուրջ՝ հյուրատուն¹⁵⁹: Օրբելյանի կարևոր ձեռնարկումներից է լինում Արատեսի կամ Վերին Նորավանքի եկեղեցիների վերանորոգումը, այն որպես ամառանոց-աթոռահիստ հաստատելը, տեղի վարդապետարա-

¹⁵¹ Նույն տեղը, էջ 322:

¹⁵² «Վիմական տարեգիրք», էջ 181:

¹⁵³ Սո. Օրբելյան, էջ 353:

¹⁵⁴ Ս. Բարխուդարյան, «Դիվան», հտ.—Բ, էջ 12:

¹⁵⁵ Նույն տեղը, հտ.—Գ, էջ 180:

¹⁵⁶ Նույն տեղը, էջ 49:

¹⁵⁷ Նույն տեղը, էջ 178:

¹⁵⁸ Նույն տեղը, էջ 68:

¹⁵⁹ Նույն տեղը, էջ 246:

¹⁴⁸ Սո. Օրբելյան, էջ 364:

¹⁴⁹ Նույն տեղը, էջ 351:

¹⁵⁰ Նույն տեղը, էջ 351—352:

նի հոգածությունն ու խնամքը: Օրբելյանի աթոռակալության ժամանակ են կառուցվել մաս Ադալ ամապատի եկեղեցիները, որոնց մասին դրանք կառուցող Մատթեոս վարդապետը 1292 թվականին նույն ամապատում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում գրում է. «... ի քահանայապետության մահանգիս Ստեփանոսի հեզի և մարդազնիրի, և յիշխանության որոցն մեծափառ իշխանաց Պողոտյ՝ Պապաքին և Ամիր Հասանայ: Եւ եւ Մատթեոս վարդապետ հրամանաւ և ձեռնտությանը Ամիր Հասանայ շինեցի գտեղիքս միայքանայքը՝ մակ վանս, և շինեցի զեկեղեցիքս և զծամատունս»¹⁶⁰:

Սակայն այդ ժամանակ և՛ մոնղոլական պետության, և՛ Սյունիքի քաղաքական կյանքում տեղի են ունենում նոր իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում մաս Ստեփանոս Օրբելյանի ծրագրերի իրագործման վրա: Տարապիճի մահվանից շատ չանցած, զահերեցության համար Օրբելյան ժառանգների միջև վեճ է ստաջանում և հարցը լուծվում է միայն մոնղոլ խանի միջամտությամբ: Գահերեցությունը չնայած անցնում է Տարապիճի որդիներից մեծին՝ Ելիկունին, սակայն մյուս որդիներին ևս տիրություններ են հատկացվում, որը գալիս է ջլատելու և թուլացնելու Սյունիքի ռազմական ու տնտեսական հզորությունը: Սակայն շուտով խռովություններ են ծայր առնում մաս Մոնղոլական խանության ներսում: 1295 թվականին, որպես այդ պետության գլուխ ընտրվում է Ղազան խանը (1295—1304), որի գորավարներից Նավոուզ անունով մեկը ապստամբում է նրա դեմ և ավերածություններ սկսում Ատրպատականում, Նախիջևանում և Սյունիքում¹⁶¹: Նավոուզի հրոսակները «Ելին և ի մեծ աթոռն Սիւնեաց և կամէին քակել զեկեղեցին, զոր կաշառօք և բռնութեամբ ոչ թողացուցաք»¹⁶², — գրում է Օրբելյանը:

Այս դեպքերից հետո Ղազան խանը կարողանում է համախմբել իր ուժերը և պարտության մատնելով ու ձերբակալելով Նավոուզին, գլխատում է նրան: Ըստ Սյունյաց պատմիչի, Նավոուզի ձերբակալմանը մասնակցել էին մաս Օրբելյան Լիպարիտն ու Խաղբակյան Էաշիճ¹⁶³: 13-րդ դարի վերջին մոնղոլները ընդունում են մահմեդականություն, և սկսվում են կրոնական հալածանք-

ները քրիստոնյաների նկատմամբ, ծանրանում են հարկերը: Այս ժամանակ նոր ահազանգ է լսվում Կիլիկիայից: Հեթում Բ-ի (1289—1305) ցանկությամբ և ամմիջական ազդեցությամբ 1298 թվականին կաթողիկոս է ձեռնադրվում Գրիգոր Է Անավարզեցին (1293—1307): Անավարզեցին նախօրոք հայտնի էր իր օտարամտությամբ, սակայն Հայաստանի եկեղեցիները այս անգամ որևէ ընդդիմություն ցույց չեն տալիս այս ընտրությանը, ինչպես վարվել էին Ապիրատի ընտրության պարագային¹⁶⁴: Պատճառը պետք է որոնել ինչպես նոր հակաթոռություն չստեղծելու, այնպես էլ բուն Հայաստանում մահմեդականացած մոնղոլների հալածանքների մեջ: Օրմանյանն այս հեռատեսությունը վերագրում է «Արեւելայց պետն ու գլխաւոր եղող Ստեփանոս Օրբելեանի խոհականութեան, որ զգացած է անշուշտ, թէ հայրապետութեան պատակտունը վտանգաւոր ու կարի վնասակար կըլլար ազգային եկեղեցւոյն»¹⁶⁵: Սակայն Անավարզեցու բռնում ու կոյր օտարամտությունը շուտով գալիս է խախտելու Հայ Եկեղեցու դարավոր ավանդություններն ու սրբագործված սովորությունները: Պետք է նկատել, որ Անավարզեցու օտարամտությունը չի սահմանափակվում արտաքին արդուզարդի ընդօրինակմամբ, այլ մինչև իսկ հասնում է պատարագի ժամանակ բաժակի մեջ ջուր խառնելուն և այլն: Նա նույնիսկ անմեղաբարկ կապեր է ունենում Կ. Պոլսի հունաց պատրիարքի հետ և «խոստանալով լանձն առնել զոր ինչ և խնդրեցեան»¹⁶⁶: Չնայած այս ամենի մասին Օրբելյանը գիտեր նախօրոք, բայց չի ցանկանում նոր գծողությունների դուր քաշել, հատկապես նկատի ունենալով հայոց վերջին թագավորության՝ Կիլիկիայի քաղաքական անքայքեմաստ վիճակը: Եվ չնայած առանց ընդիմանալու այլևս «ոչ գոյր տեղի յուսոյ կամ ապաստանի», սակայն, շարունակում է պատմիչը, «Երկնչէաք, եթէ յաւուրս մեր զարթնու չարն ի պատերազմ ընդ եկեղեցւոյ և յարուցանէ մրրիկ խռովութեան ի մէջ մեր և ընթադրեալ կործանէ զսինիքոր մնացուած ազգիս»¹⁶⁷: «Սինիքոր մնացած ազգ» ասելով Օրբելյանն այստեղ նկատի ունի Կիլիկիայի թագավորությունը, քանզի հակաթոռության պարագային զրծտությունների պատճառով հատկապես պիտի տուժեր Կիլիկիայի թագավորությունը:

¹⁶⁰ Ա. Մաթևոսյան, «Հաղորդման ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1948, էջ 676:

¹⁶¹ Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխատ., էջ 94:

Լ. Մանանդյան, նշվ. աշխատ., հտ. — Գ, էջ 318:

¹⁶² Ստ. Օրբելյան, էջ 340:

¹⁶³ Նույն տեղը, էջ 347:

¹⁶⁴ Տե՛ս Օրմանյան, նշվ. աշխատ., հտ. — Ա, էջ 1511:

¹⁶⁵ Նույն տեղը, հտ. — Բ, էջ 1740:

¹⁶⁶ Ստ. Օրբելյան, էջ 327—328:

¹⁶⁷ Նույն տեղը, էջ 328:

Սակայն Օրբելյան աթոռակալի այս հետա-
տեսությունը ի գործ չեղավ կանխելու դեպ-
քերի հետագա ընթացքը:

Ծուռով Սյունիք է ժամանում Անա-
վարզեցու պատվիրակը՝ Կեսարիայի եպիս-
կոպոս Կոնստանդինը, որն իր հետ բերում
է կաթողիկոսի նորամուծությունների ցու-
ցակը և առաջարկը՝ ենթարկվելու և ղեկա-
վարվելու դրանցով: Պատվիրակը Սյունիք
է հասնում 1296—1297 թվականներին, քա-
նի որ, ինչպես Օրբելյանն է գրում, Անա-
վարզեցին իր օտարամոլության քողը դնել
է նետում կաթողիկոսական Աթոռին անց-
նելուց երկու տարի հետո և բացահայտորեն
ու ինքնագլուխ սկսում նորամուծություններ
կատարել¹⁶⁵:

Օրբելյանն, անշուշտ, սպասում էր Անա-
վարզեցու պատվիրակին և հավատացած
էր, որ առանց բուն Հայաստանի եկեղեցի-
ների համաձայնության, Կիլիկիայում պի-
տի հրաժարվեն մամն անիմատ ու նաև
կորստաբեր քայլից:

Երբ Կոնստանդին Կեսարացին հասնում
է Սյունիք, Օրբելյանն անմիջապես իր մոտ
է կանչում «աշխարհի եպիսկոպոսներին ու
իշխաններին»¹⁶⁶ և ժողով է գումարում, ուր
միաձայն կերպով որոշվում է մերժել Անա-
վարզեցու ընթացքը: Օրբելյանի կողմից
գրված պատասխան թղթում տրվում է Հայ
Եկեղեցու՝ ինքնուրույն մնալու համար դա-
րերով մղած պայքարի համառոտ պատմու-
թյունը, հիմնականում վկայակոչումների ձե-
վով: Այնուհետև հերքում է Անավարզեցու
նամակի հիմնական կետերը: Նամակի տակ
ստորագրում են ժամանակի աչքի ընկնող
կրոնական, մշակութային ու իշխանական
տների գործիչներ: Հատկանշական է, որ
նամակի տակ ստորագրած 14 ներկայա-
ցուցիչներն էլ ձգովում են (աշխարհական-
ները միանում են հոգևորականների ձգով-
քին) նրանց, «որք ոչ միաբանին այսմ
հայրենաւանդ և հայրապետական հաստա-
սիրմն դաւանութեանց»¹⁷⁰: Այս նամակը չա-
փազանց մեծ նշանակություն է ունենում
Հայ Եկեղեցու ընթացած դավանաբանական
սկզբունքների ու եկեղեցական-ազգային
սրբագործված ավանդությունների պահ-
պանման գործում, չնայած Անավարզեցին
դրանից հետո էլ շարունակում է իր անհե-
ռատես ընթացքը:

Ստեփանոս Օրբելյանի կարևոր ձեռնար-
կումներից է լինում նաև իր կենդանության
օրոք հաջորդ մետրոպոլիտի ընտրությու-
նը, որի նպատակն, անշուշտ, նոր ընդհա-

րումներն ու հնարավոր երկփեղկումը կան-
խելն էր:

Ստեփանոս Օրբելյանի մահվան թվակա-
նի մասին հայտնվել են տարբեր կարծիք-
ներ: Այսպես, ըստ Սիլիանի, Օրբելյանը
մահացել է 1309 թվականին, ըստ Զամին-
յանի՝ 1305 թվականին¹⁷¹ և այլն: Դրանք
հիմնովին հերքել է Գ. Մ. Գրիգորյանը¹⁷²:
Անհերքելի է այն փաստը, որ Ամաղու Նո-
րավանքում Ստ. Օրբելյանի պահպանած
տապանաքարի վրա գրված է. «Ի թվիս
20Բ (1303). այս է շիրիմ հանգստեան մե-
ծի մետրոպոլիտին Սիւնեաց Ստեփաննո-
սի»¹⁷³: Այս թվականից հետո այլևս որևէ
հիշատակություն չունենք Սյունյաց Աթոռի
մեծ երախտավորի կենդանի լինելու վերա-
բերյալ, բացառությամբ Տաթևի զանգերից
մեկի հետևյալ արձանագրության. «ԹՎ.
(1304) լսելի արա ինձ, Տէր, զձայն ցնծու-
թեան եւ զուրախութեան եւ ցնծացեն ու-
կերք իմ տառապեալ. գթա Քրիստոս Աստ-
ուած ի Տէր Ստեփաննոսի»¹⁷⁴: Սակայն տա-
պանաքարի արձանագրությունը հիմք ըն-
դունելով, զանգի վրայի արձանագրությու-
նը պետք է համարել վրիպակ: Նշենք, որ
տապանաքարի վրայի թվականը, որպես
Օրբելյանի մահվան թվական, անատարկե-
լիորեն ընդունել են նաև վերջին ժամանա-
կի ուսումնասիրողները¹⁷⁵:

Հիմնվելով 1284 թվականի մի ձեռագրի
հիշատակարանի վրա, ուր Ստ. Օրբելյանը
անվանվում է «երանելալ րաբունի», Գ. Գրի-
գորյանը այն կարծիքն է հայտնում, թե
Օրբելյանը Ամաղու Նորավանքում նաև ու-
սուցչություն է արել¹⁷⁶: Այդ հիշատակարա-
նը հետևյալն է. «հրամանաւ եւ արդեամբ
ազնուագարմ եւ իշխանաշուք, վեհիմաստ
եւ զուարթանուն րաբուն Ստեփանոսի, որ
տարփեցաւ քանից սորին անքիծ, եւ հրա-
մայեաց որոշմել ի գիծ ինձ ամենամեղ ան-
ծին Յովանէս քահանայի... հարազատ
նորին եղբարց եւ արինատու մերձատրաց,
քաջ իշխանաց Հայոց Մեծաց գովելի եւ
յաղթող զարավարաց... յիշեսցիք զերիցս
երանելալ րաբունին, զպանծալի Պապկն»¹⁷⁷:
Սրան ավելացնենք 1303 թվականի մեկ այլ

¹⁷¹ Ա. Զամինյան, «Հայ գրական. պատմություն»,
Ա. մաս, էջ 203:

¹⁷² Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխատ., էջ 200:

¹⁷³ Ս. Բարխուդարյան, «Դիվան», հտ. — Գ, էջ
130:

¹⁷⁴ Նույն տեղը, հտ. — Բ, էջ 37:

¹⁷⁵ Տե՛ս Լ. Խաչիկյան, «Ցանկ Սյունյաց եպիս-
կոպոսների», Բաներ Մատենադարանի, № 9, էջ
198: Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխատ., էջ 200:

¹⁷⁶ Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխատ., էջ 222—
223:

¹⁶⁵ Նույն տեղը, էջ 327:

¹⁶⁶ Նույն տեղը, էջ 328:

¹⁷⁰ Նույն տեղը, էջ 337:

հիշատակարան ևս, որ գրված է. «...ի խնդրոյ աստուածաբեալ Գիտնական և արդիւնական վարդապետի, միանգամայն և արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ստեփաննոսի, որ է ակն արևելեան և աթոռակալ մեծի Սիւնեաց տանն»¹⁷⁶։ Այս առումով հատկանշական է նաև ժամանակի հայտնի մանրամակարիչ-քանդակագործ Մոմիկի թողած հետևյալ հիշատակությունը. «...գգեբաբուն բանի սպասաւորն և զարեգակնափայլ լուսատուն հոգոց՝ զմետրապալիտն Սիւնեաց գտեր Ստեփաննոս ստացող յիշեցէք ի տէր»¹⁷⁹։

Ստ. Օրբելյանով սկսված Սյունյաց Աթոռի վերագործմանը շարունակվում է նաև նրան հաջորդած Հովհաննես-Օրբելի ժամանակ։ Ինչպես Ստ. Օրբելյանը, այնպես էլ նրան հաջորդած նույն տոհմից Սյունյաց երկու մետրոպոլիտները՝ Հովհաննես-Օրբելն ու Ստեփաննոս-Տարսայիճը, իրենց կրթությունն ստանում են Գլաձորի համալսարանում¹⁸⁰։

Հովհաննես-Օրբելի մասին համառոտակի անդրադարձել է Լ. Խաչիկյանը։ Հիմնվելով 1302 թվականի մի ձեռագրի հիշատակարանի վրա, նա նշում է, որ այդ թվականից արդեն Հովհաննես-Օրբելը հիշվում է որպես Սյունյաց մետրոպոլիտ¹⁸¹։ Նույնը նշվում է նաև Գ. Գրիգորյանի մոտ¹⁸²։ Սակայն Հովհաննես-Օրբելի մասին կա ավելի վաղ մի հիշատակություն։ 1300 թվականի մի Ավետարանի հիշատակարանում Օրբելն իրեն կոչում է «Սիւնեաց եպիսկոպոս», հիշելով նաև դեռևս կենդանի «...մեծ քահանայապետին եւ երեւելի առաքելական առնն մետրապալիտն Սիւնեաց հօրեղբօրն մեր Տեառն Ստեփաննոսի»¹⁸³։ Ուշագրավ է այն, որ եթե 1300 թվականին Հովհաննես-Օրբելն իրեն կոչում է սոսկ եպիսկոպոս Սյունյաց, ապա երկու տարի հետո՝ 1302 թվականին, արդեն որպես «պառաւորթրանտէ Հայոց մեծաց և մետրապալիտ Սիսական նահանգի»¹⁸⁴։

¹⁷⁷ Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 559։

¹⁷⁸ Լ. Խաչիկյան, «ԺԴ դարի ձեռ. հիշատակարաններ», էջ 13։

¹⁷⁹ Երևանի պետ. Մատենադարան, ձեռագիր № 848։

¹⁸⁰ Գ. Մ. Գրիգորյան, «Սյունիքի վանական կալվածաիրավությունը 13—14-րդ դարերում», Երևան, 1973 թ., էջ 213։

¹⁸¹ Լ. Խաչիկյան, «Սյունյաց Օրբելյանների Բուրթլյան ճյուղը», Բանբեր Մատենադարանի, № 9, էջ 190։

¹⁸² Գ. Մ. Գրիգորյան, «Սյունիքը Օրբելյանների օրոք», էջ 223։

¹⁸³ «Յուրաքանչյուր հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Լեւոնափրկիչ վանքի», հտ. — Ա, Վիեննա, 1870 թ., էջ 52—53։

գի»¹⁸⁴։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ այս տարիների ընթացքում Օրբելը նախ նշանակվել է իր հորեղբոր Ստ. Օրբելյանի պառնակիցը, իսկ Օրբելյանի մահվանից մեկ տարի առաջ նշանակվել որպես հաջորդ մետրոպոլիտ։

Հովհաննես-Օրբելը Ստ. Օրբելյանի եղբոր՝ Լիպարիտի որդին է։ Մոր անունն է Նանա։ Այս մասին որոշակիորեն ասվում է 1303 թվականի մի ձեռագրի հիշատակարանում. «Քրիստոս, յոյս հաւատացելոց, քո սուրբ և երջանիկ առաքելոցդ բարեխաւսութեամբ, յերկար ժամանակաւ և պարագայծ ամաբ պահպանեալ գտորբ րաբունին գՅովհաննէս՝ ստացող սորա, և ողորմեայ երկիւղալից և աստուածահաճոյ ծնողաց նորա, մեծափառ իշխանաց իշխանին Լիպարտի՝ հաւր սորա և ամենաւրհմեայ սուրբ դշխոյին Նանահին՝ մայր սորա, ամեն և եղիցի»¹⁸⁵։ Հովհաննես-Օրբելը, իր նախնական կրթությունն ու դաստիարակությունն ստանալով Ստ. Օրբելյանի մոտ, այնուհետև շարունակում է ուսանել Գլաձորում՝ Եւայի Նշեցու մոտ։ Դա որոշակիորեն երևում է Նշեցու հետևյալ հիշատակարանից. «Դարձեալ յեռեալ հիւսեացի ընդ յիշատակեալս ամենայն բարի յիշման արժանաւորն, արհիական վերատեսուչ այսմ նահանգի, որ է աղն սորին ըստ մարմնոյ, վարժն յիմաստս և վստմն ի գիտումս տէր Յովհաննէս մականունն Արպէլ, մետրապալիտ և այցելու Սիւնեաց երկրտաւան գաւազանաց՝ մանաւանդ իմաստութեամբ և ուղղափառութեամբ՝ ամենայն աշխարհի, որ է մեր սիրելի որդի ըստ փրկագործ երկանց բանին ծնընդեան»¹⁸⁶։

1304 թվականից սկսած, Հովհաննես-Օրբելը նյութական մեծ օգնություն է ցույց տալիս Գլաձորի համալսարանին։ Դա որոշակիորեն երևում է Նշեցու հետևյալ հիշատակարանից. «...յորոց (իմա՝ Հովհաննես-Օրբելից և Ստեփաննոս Տարսայիճից — Ծ. Հ.) և մեք բազում գուրթս և խնամս տեսաք ի սոցանէ...»¹⁸⁷։ Հովհաննես-Օրբելի կարևոր շինարարական աշխատանքներից է 1312 թվականին Արփա գյուղի մոտի Ա. Աստվածածին եկեղեցու կառուցումը Մոմիկ ճարտարապետի կողմից։ Այս առթիվ եկեղեցու պատին Հովհաննես-Օրբելը թողել է հետևյալ արձանագրությունը. «Ես տէր Յովհաննէս Արպէլ Սիւնեց արհեպիսկոպոս շինող սուրբ եղելոյս յիշել աղաչեմ։ Եւ եւ

¹⁸⁴ Լ. Խաչիկյան, «ԺԴ դարի ձեռ. հիշ. ...», էջ 7։

¹⁸⁵ Նույն տեղը, էջ 12։

¹⁸⁶ Նույն տեղը, էջ 183։

¹⁸⁷ Նույն տեղը։

գրաբեպաշտ իշխանաց իշխանն գարեան մերձաւորն իմ գթաց մեհամարտիկն զԲիրթէն եւ զոշխտաւիտ Բրիտտոսաւեր զոյգն իւր զՎախախն՝ նորաբողոքն զաւակաւքն իրեանց Բէշքէնին եւ Իւանէին. թվ. 22 (1321): Ծարժ եղել Մոմիկ վարդապետ»¹⁸⁸: Հիշատակարաններում Հովհաննէս-Օրբելլը մեծարված է «առաքելաշնորհ արքեպիսկոպոս», «գերջանիկ ի վարդապետ», «գառատամիտ, և զաշխատաւեր Յոհաննէս», «քաջ հոռետոր և անյաղթ սոփեստ» կոչումներով ու մակդիրներով:

Հովհաննէս-Օրբելլը նույնպէս, ինչպէս և իր նախորդը՝ Ստ. Օրբելլանը, Եւսայի Նչեցու համագործակցությամբ շարունակում է գլխավորել հակաուղիթոսական պայքարը: Այս առումով հատկանշական է Կոնստանդին Դ Լամբրոնացուն (1322—1328) հասցեագրված նամակը, ուր նամակի տակ ստորագրած Հովհաննէս-Օրբելլը, Ստեփանոս Տարսայիճը և Եւսայի Նչեցին իրենց խիստ բողոքն են արտահայտում Կիլիկիայի միաբարակական ձգտումների հանդէպ: Մյուսիքում ունիթոռները առաջին անգամ հանդէս են գալիս Ստ. Օրբելլանի ժամանակ, և Ստ. Օրբելլանից սկսած իսկ այստեղ սկսվում է անհաշտ մի պայքար: Նախ Ստ. Օրբելլանը, Հովհաննէս-Օրբելլը և Եւսայի Նչեցին ու Ստ. Տարսայիճը, ապա Հովհանն Ռոտունեցին ու Գրիգոր Տաթևացին իրենց աշակերտների հետ միասին հնարավոր ամեն ջանք ու միջոց գործադրում են (գաղափարական պայքարի հետ միասին երբեմն դիմելով նաև հալածանքների), արգելելու այդ վնասակար ընթացքը: Անդրադառնալով այս հարցին, Գ. Հովսէփյանը գրում է. «21-ներ Նչեցին իւր դպրոցով, շատ աւելի մեծ չափերով վտանգուած կը լինէր Հայոց Եկեղեցու անկախութեան խրնդիրը»¹⁸⁹:

Հովհաննէս-Օրբելլը վերջին անգամ հիշվում է 1323 թվականին «Տէր Յովհաննէս մականուն Արպէլ, մետրապոլիտ և այցելու Սիմեոն երկոտասան գաւազանաց»¹⁹⁰: Մահվան թվականը Լ. Խաչիկյանը համարում է անհայտ, սակայն Ամատու Նորավանքում պահպանվել է նրա տապանաքարը, որի վրա գրված է. «Թվիս 22Գ (1324). տուն իմաստից եւ հանճարոյ Արպէլ գովա-

նէս հոշակաւոր մետրապոլիտ Սիմեոնաց»¹⁹¹:

Հովհաննէս-Օրբելլին փոխարինել է Ստեփանոս-Տարսայիճը: Ստ. Տարսայիճը Տարսային իշխանի թոռն էր, Ստ. Օրբելլանի եղբոր որդին¹⁹²: Ստ. Տարսայիճի հոր անունը Զալալ էր, մոր անունը՝ Գոնցա: Այս մասին նա հիշատակում է մի ձեռագրի հիշատակարանում. «Նաև յիշել զճնոդսն իմ՝ զհայրն իմ զԶալալն և զմայրն իմ զամեհարհնէալ Գոնցան...»¹⁹³:

Ստ. Տարսայիճի անվանը առաջին անգամ հանդիպում ենք 1314 թվականի մի ձեռագրի հիշատակարանում, ուր Պողոս գրիչը բավական ընդարձակ տեղեկություններ է հաղորդում նրա մասին: Այդտեղից իմանում ենք, որ Ստ. Տարսայիճը փոքր հասակից ուղարկվել է Եւսայի Նչեցու մոտ՝ Գլաձոր, ուր «...տունեալ զանձն ի կրթութիւն գրոց, և աստուածային արիւնացն և պատուիրանացն հլու և հպատակ, նաև յիմաստասիրական արհեստս յոյով ժամանակս ղեգերեալ...»¹⁹⁴: Նույն հիշատակարանի շարունակության մեջ գրիչը հայտնում է նաև, որ Ստ. Տարսայիճին դասավանդել են Եւսայի Նչեցին ու Սարգիս րաբունին, և որ Ստ. Տարսայիճն այդ ժամանակ արդեն արժանացել էր սարկավագության ու կուսակրոն քահանայության աստիճանի և ընտրվել հաջորդ մետրոպոլիտ: 1314 թվականից, որպէս ապագա մետրոպոլիտ, Ստ. Տարսայիճը հիշվում է և մի այլ ձեռագրի հիշատակարանում.

«Ի հոյովման ժամանակս,
Ի մեծ հայոց թուականս,
Յ է24 և երեքիս (1314)...
Ի Վայիձոր վիճակս,
Ստ ոոս տիեզերալոյս վարդապետիս
Մեծահոշակ Եւսայիս,
Նա և կարեկից մեծագարմին
Աթոռակալ Տարսայիճիս,
Որ է մեզ կարեկից յամեն բարիս,
Եւ օժանդակ յիւր գաւառիս»¹⁹⁵:

Հատկանշական է, որ այս ժամանակից իսկ Ստ. Տարսայիճը գրիչների կողմից մեծարվում է որպէս «լուսագարդ», «ամեն ինչում կարեկից», «մեծ ջանքերով հոգևոր սնունդ որոնող» և այլ նման հիացական և

¹⁸⁸ Ս. Բարխուդարյան, «Դիվան», հտ.—Գ, էջ 29:

¹⁸⁹ Գ. Հովսէփյան, «Մատրակեանք կամ Պողոսեանք Հայոց պատմութեան մեջ», հտ.—Բ, Երուսալիմ, 1942 թ., էջ 267:

¹⁹⁰ Լ. Խաչիկյան, նշվ. աշխատ., էջ 183:

¹⁹¹ Ս. Բարխուդարյան, նշվ. աշխատ., հտ.—Գ, էջ 232:

¹⁹² Լ. Խաչիկյան, ԺԴ դարի ... հիշատակար., էջ 231:

¹⁹³ Նույն տեղը:

¹⁹⁴ Նույն տեղը, էջ 99:

¹⁹⁵ Նույն տեղը, էջ 104:

երախտապարտ խոսքերով: Եթե 1814 թվականի հիշատակարաններում Ստ. Տարսայի՞ն համարվում է հաջորդ մետրոպոլիտ, ապա 1821 թվականի մի հիշատակարանում Ըս Հովհաննես-Օրբելի հետ միասին համարվում է «վերադիտող տանա Սիմեոն»¹⁹⁶: Այս տեղեկությունը թերևս որոշակիորեն լուսաբանվում է մի Ավետարանի հիշատակարանի տեղեկությունների օգնությամբ, որ Եսայի Նչեցին գրում է. «...ամենամաքուր տեր Ստեփաննոս մականուն Տարսային, որ է և Ըս մեր որդի ի բանե ծնեալ, մանուկ տիառք առեալ զաշտիճան արհեսկակոպոսութեան»¹⁹⁷: Այս հիշատակարանը գրվել է 1823 թվականին, երբ դեռ կենդանի էր Հովհաննես-Օրբելը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Ստ. Տարսայի՞նը արքեպիսկոպոսության աստիճան է ստացել 1814 թվականից հետո և ի պաշտոնե ճանաչվել որպես հաջորդ մետրոպոլիտ, որը նկատի ունենալով, 1821 թվականին գրիչն իր արտագրած ձեռագրի հիշատակարանում նրան կոչել է «վերադիտող տանա Սիմեոն»:

1824 թվականին, Հովհաննես-Օրբելի մահվանից հետո, Ստ. Տարսայի՞նը ընտրվում է Սյունյաց մետրոպոլիտ: Առաջին անգամ, արդեն որպես մետրոպոլիտ, Ըս հիշվում է 1826 թվականին Վաղարշի վանքի (Որոտնավանք) մի արձանագրության մեջ, որ Ստ. Տարսայի՞նը նորակառույց հյուրատանը կալվածքներ է նվիրում «ի պետս պանդուկին»¹⁹⁸: Հաջորդ հիշատակությունը Ստ. Տարսայի՞նի մասին պահպանվել է 1831 թվականի մի ձեռագրի հիշատակարանում, որ կարդում ենք. «... տեառն Ստեփանոսի՝ հզար և իմաստուն գիտնականի, վարժեալ ի վարժարանի վարժապետին Եսայեայ տիեզերաքարոզ լուսաորչին, որդի իշխանաց իշխանին՝ քաջ սպարազեն մեծամարտիկ զինատրի Զալալին, թոռն մեծ աթաբակին Հայոց և Վրաց վեհ Տարսայի՞նին, տեր և վերատեսուչ զահերեց և գլուխ արհիերից աթոռոյս Սիմեոն Տաթևոյ և Նորավանից

և Ցախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց»¹⁹⁹: Այստեղ ուշադրության արժանի է նաև վերջին տողը, որ Սյունյաց երկու գլխավոր աթոռներից՝ Տաթևից ու Նորավանքից հետո նշվում է Ցախացքարը: Ը. Ալիշանը գտնում է, որ Սյունյաց եկեղեցիների ու վանքերի հանդեպ Ցախացքարի դերը սկսել է բարձրանալ Ստ. Օրբելյանից սկսած, երբ Տարսայի՞ն Օրբելյանն այն նվիրում է նրան իբրև սեփական ժառանգություն: Սակայն ողջ 14-րդ դարի հիշատակարանների ու արձանագրությունների մեջ այլևս ոչինչ չի պահպանվել Ցախացքարի մասին:

Ստ. Տարսայի՞նի կատարած շինարարական աշխատանքներից հայտնի է «Զորաց տաճար» եկեղեցին: Ի միջի այլոց նշենք, որ Զորաց տաճարը ճարտարապետական տեսակետից մի անսովոր եկեղեցի է, որն ունի միայն արևելյան բեմի մաս և կողքերին երկուսական ավանդատներ: Ենթադրվում է, թե պաշտամունքի համար շինվել է խորանը և բեմը, իսկ գործը կանգնում էր բաց երկնքի տակ²⁰⁰, որի համար և կոչվել է Զորաց տաճար:

Ստ. Տարսայի՞նի մահվան թվականը ստույգ հայտնի չէ: Վերջին հիշատակությունը նրա մասին 1831 թվականից է, իսկ 1833 թվականին Վերին Նորավանքի ռաբունայետ Կյուրիոնը որպես Սյունյաց աթոռակալ հիշատակում է նույն վանքի վանահայր տեր Սարգսին. «Փառք Բրիստոսի աստուածութեանն, որ ետ տկար մտաց և մատանց ջիւս և ծովակալութիւն ժամանել յաւարտ անտարանիս, ի թվաբերութեան Հայոց 228 (1833)... ի յաթոռակալութեան սուրբ աթոռոյս Սիմեոն տեր Սարգսի...»²⁰¹:

Սյունյաց հետագա աթոռակալներին հարկ չենք համարում աչտեղ անդրադառնալ, քանի որ այդ մասին բավական մանրամասն կերպով անդրադարձել է Լ. Խաչիկյանն իր «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը» հոդվածում²⁰²:

¹⁹⁶ Լ. Խաչիկյան, նշվ. աշխատ., էջ 231:

²⁰⁰ Ս. Բարխուդարյան, նշվ. աշխատ., հտ.—Գ, էջ. 105:

²⁰¹ Լ. Խաչիկյան, նշվ. աշխատ., էջ 257:

²⁰² Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 173—199:

¹⁹⁶ Նույն տեղը, էջ 166:

¹⁹⁷ Նույն տեղը, էջ 183:

¹⁹⁸ Ս. Բարխուդարյան, նշվ. աշխատ., հտ.—Բ, էջ 101:

